

Հասած ժամանակը և անոնց այնտեղ ի սկզբան ունեցած անսովոր ընթացքը՝ յիշեալ կղզւոյն ապստամբութեան ժամանակը, նմանապէս այն զօրաց շտապաւ հոկանչուիլը և ուրիշ այս օրինակ դէպքերը գրեթէ մոռցուած էին օգոստոսիառ Սուլթանին այն նպատակաւ, որպէսզի իւր կայսերական բարեհաճ զգացմանց նոր աւազոյց մի տայ ձեր բարձրութեանը: Ուստի ձեր խղճի մտօր չէք կրնար ուրանալ թէ Նորին կայսերական Վ. Ե. Հափառութիւնը ոչ միայն արդիւիւ չէր ուզէր ձեր կացութեան շարունակութիւնը՝ նշանակեալ սահմանաց մէջ, այլև այս նկատմամբ ո՛ր և է օգնութիւն և դիւրութիւն չինայեց: Եղիպտական մեծ երկիրը՝ որ ձեր բարձրութեան կառավարութեան ներքեւ գրուած է, օգոստոսիառ Սուլթանին ստացուածքը եղած դիւրաւոր երկիրներուն մէջ մասը ըլլալով, անոր բնակչաց բարօրութիւնը և բարեբաւորութիւնը բնականապէս իւր մարդասիրական խնամոց առարկայ եղած են: Հետեալ բար, և զօրութեամբ իւր իրաւանցը իբրև վեհապետ Եղիպտոսի, մեր օգոստոսիառ տէրը հսկողութիւն ընել կըստաւարտուէր ի վերայ ծախուց, որք մեծապէս կը ծանրանան Եղիպտոսի ներկային և ապագային վերայ: Եթէ այս հսկողութիւնը չեղաւ, եթէ միւս իրաւունքները և սարսափօրութիւնները ի գործ չգրուեցան ուրոնք որոշուած են այն կայսերական հրովարտական մէջ որոնցմով Եղիպտոսի ժառանգական կառավարութիւնը ձեր Բարձրութեան գերդաստանին յանձնուած է, առիկա ընել չէ թէ Նորին կայսերական Վ. Ե. Հափառութիւնը թող տուած է իւր իրաւունքը և իւր սարսափօրութիւնները, այլ միայն վստահի Նորին Վ. Ե. Հափառութիւնը համոզուած էր թէ ձեր Բարձրութիւնը իւր խորին խոհեմութեամբ չարաչար պիտի չգործածէր այս զանցառութիւնը, այլ ընդհակառակն ձեռի եղած բարեբաւորութեանց արժանիքը ճանաչելով, պիտի չհեռանայիր երբէք հաւատարմութեան և անձնաւորութեան ճանապարհէն:

Ի ժամանակին յորում այս համոզումը իւր ամենայն զօրութեամբ կըստիւրէր և օգոստոսիառ Սուլթանին ձեր վրայ եղած բարեհաճ զգացմունքը կըշարունակուէր և կաւեկնար որքաւորէ, խնայ ալ ունեցաւ ինձ թէ ձեր Բարձրութիւնը յԵւրոպոս ճանապարհորդութիւն մի ընելու միտք ունի: Թէպէտ և հաճեցայք ծանուցանել մեզ ձեր մեկնիլը, սակայն հարկ չհամարեցիք բացատրել մեզ թէ ի՞նչ արժէք կրնան ունենալ այն պատճառները զորոնք հասարակաց ձայնը կուտար այս ճանապարհորդութեան, նմանապէս հարկ չհամարեցիք ո՛ր և է պատահաւ մի տալ բացատրութեանցը որոնք խնդրուեցան ի մէջ ընդհանրաբար: Զեր այս լուրս թէպէտ և զարմացոյց զմեզ, այսու ամենայնիւ հարկ համարեցինք ստուսել, որ ժամանակը լուսաւորէ զմեզ զորքերով: Այս միջոցին էր որ խնայանք թէ ձեր Բարձրութիւնը Ալեք. սանդրկայէն ուղղակի Քարֆու գաւով այցելութիւն ըրլիւ Հելլենացւոց թագաւորին, հրաւիրելով Վերլին

աղղապետութիւնը առնելովն ու հետզհետէ ժողովուրդին ուրիշ եկեղեցական և աշխարհական արտօնութիւնները բանաբարելով՝ նովին գործով յանդուր և զած է ազգին դէմ, որով և կարելիք և սրտառու ընելով ազգը՝ այն աստիճան զայթաղեցուցած և օտարացուցած է իրմէ, որ սկսն ու վստահութիւնը վերնալով անոր և ազգին մէջտեղ, համաձայնութեան ամեն յոյս խալաւ անհետացած է: Եւ այս վիճակին բնական հետեանքն էր դերաւ. Հասունեանի իրաւասութիւնը ժողովուրդին կողմէն ըստ իրաւանց բողոքներով անվաւեր և ապօրինաւոր, հետեալպէս անոր բողոք ըրածները և ընկերները իւր ոչինչ և անզօր հրատարակուած են:

Յայտնի, և ընկերական ու վարչական սկզբանց տեղեակ և զանոնք յարգող միաբերու առջև անհակառակելի է չորրորդ որ, ո՛րեւիցէ պաշտօնեայ մը որուն հոգեւոր կամ մարմնաւոր իրաւասութիւնն այսպիսի սաւազաններու ներքեւ ոչինչ և անզօր եղած է՝ իրաց այս վիճակը նոյն մնալով՝ չկրնար օրինաւորապէս որ և իցէ ազգային կարգադրութիւն մը ընել: Ուստի և դուք, դերաւ, և վերապատուելի տեսար և հարք, ազգին ընդհանուր եկեղեցական վարչութեանը վերաբերեալ կարգադրութեանց համար խորհող և օրինադրող ժողով մը օրինաւորապէս կազմելու, տօգո՛հ և երկար տակեալ ժողովրդեան մը մէջ ձեր որոշումները, նաև ձեր և ձեր յաջորդներուն պաշտօնին և անձին յարգն ու սպասել անվերջանալի դժուարութեանց եթէ ունայ չընելու համար, ըստ առաջը սկզբանց ուղիղ բանի, իրաւանց և խղճի, գործին բնութեանը և ժամանակին ու

Վ. Ե. Հափառութիւնը որ ներկայ գտնուի Շուէդի ջրանցքին բացման հանդիսին: Չուշացանք խնամաւոր նաև, թէ միևնոյն հրաւերը ըրած էք ուրիշ վեհապետաց, որոց այցելութեան՝ գաղտնի:

Աւելորդ կըհամարվիք դրուցելու թէ մեր օգոստոսիառ տէրը մեծ ուրախութիւն պիտի զգար տեսնելու որ Վ. Ե. Բարձրութիւնը վեհապետները կըհաճին ներկայ գտնուիլ մեծ ձեռնարկութեան մը ընդհանուր հանդիսին, որ կըկատարուի իւր տէրութեան մէջ մասին մէջ, և այս բարեւանք այցելութեամբ կըհաճին պատուել իւր կառավարութեան գլխաւոր անդամներէն մէկը, որուն յանձնուած է Եղիպտոսի վարչութիւնը: Այսու ամենայնիւ ձեր Բարձրութեան լուսաւոր միտքը կարօտութիւն չունի յիշեցնելու ձեզ թէ անկախ վեհապետի մը յօտար երկիր եղած հրաւերը պէտք է որ այն երկրին անկախ վեհապետին ըլլայ: Ասոր հակառակը կըզգալի թէ՛ հրաւիրելոց արժանաւորութեանը և թէ՛ երկրին վեհապետին իրաւանցը: Ուստի այս խնդրոյն մէջ ձեր Բարձրութեան ընդհանուր և ի գործ դրուած ձեռք ըստ ամենայնի մասանց հակառակ է թէ՛ մեր վեհապետին նախաւոր իրաւանց պարտք եղած յարգանացը և թէ՛ ի մէջ հրաւիրեալ օգոստոսիառ իշխանաց հարկ եղած անհաճախ պատուոյն: Միւս կողմանէ, օտար տէրութեանց քով գտնուող Բարձրագոյն Ղրան դեսպանները պարտաւոր ինչ ձեր Բարձրութեան հրամանաց ներքեւ զնել գիրներ, իբրև մեր կայսերութեան մեծ ատուածանաւորաց մէկուն, և անոնց միջոցաւ միայն պէտք էին տեղի ունենալ ձեր Բարձրութեան պաշտօնական յարաբերութիւնները: Սակայն կերելի է այս պարտքը կատարելու անոնց փոխել՝ ձեր Բարձրութեան հաճելի չըլլալ ի վատ դժգոհութեան պատճառ տուած է ձեզ, և ցաւօր որտի խնայանք թէ մեծ զգուշութիւն ըրած էք անոնց հետ հոնեցած ձեր յարաբերութեանց մէջ:

Զեր Բարձրութիւնը ամենին աղէկ դիտէ, ինչպէս և յատկապէս նշանակուած է կայսերական հրովարտական մէջ թէ, բաց ի քանի մը արտօնութիւններէ որ չորհուած են ձեզ, Եղիպտոսը ամենին տարբերութիւն մի չունի Բարձրագոյն Ղրան միւս գաւառներէն և թէ աւելորդ կառավարութիւնը չկրնար ուղղակի պաշտօնական յարաբերութիւններ ունենալ օտար տէրութեանց հետ: Բարձրագոյն Ղրան և օտար կառավարութեանց մէջ եղած զանադրութիւնները, նմանապէս կայսերութեան հիմնաւոր օրէնքը պէտք է որ միևնոյն ոյժը և զօրութիւնը ունենան Եղիպտոսի մէջ: Սակայն այս հիմնաւոր սկզբանց հակառակ՝ յԵւրոպոս ըրած շարունակ ճանապարհորդութիւնները այն երեւիլ անձին՝ որ Եղիպտոսի արտաքին գործոց պաշտօնէի անունը և տիրութեան կառուէր նպատակ ունենալով ջանալ ձեռք բերել ի նպատակ այս երկրին յիշեալ զանադրութեանց փոխութեանը, և այս վարձանաւ ուղղակի բանախօսութիւններ ընելը տէրութեանց հետ, մեծ զգուշութիւնը զոր ի գործ կըդնէ իւր դեսպանական առաքելութեան ատարկան ծաւ

պարագայից պահանջմանն ալ նայելով, կըպարտաւորիք նախ իրանց այժմու ապօրինաւոր և անկանոն վիճակին օրինաւոր և կանոնաւոր վիճակի մը փոխելուն աշխատել: Եւ այս վիճակին իրականացնելու, եթէ երբէք հնարաւոր է, միմիայն միջոցը հետեւեալն է:

1. Ղրան, Հասունեան կաթողիկէ Հոյ ժողովրդեան նկատմամբ ըրած պահանջումներէն յաջորդականապէս կամ պայմանաւ կըհրաժարի և կըհեռանայ: Երկրորդ ազգին բողոք հին արտօնութիւնները նորին ազգին կը տրուին և կապաճովցուն, այնպէս որ Արեւելեան և Արեւմտեան Տաճարատանի կաթողիկէ Հոյ ժողովուրդը կըլլայ այնպիս ինչպէս որ իւր սկիզբէն էր:

2. Այս վիճակը վերահաստատուելէն ետքը կաթողիկոսի և պատրիարքի անձին խնդիրն ի ծոց ազգին կրող շուր: Սճա մօտաւորութիւն կամ խաղաղութիւն մը յառաջ բերելու հնարաւոր միջոցին գլխաւոր կէտերը, որոնց վրայ հարկ կըլլայ ազգովին խօսիլ և միաբանիլ: Այս մօտաւորութիւնը կամ համաձայնութիւնը գործադրուելէն ետքը ըստ այնմ օրինաւորապէս հաստատուած ազգային եկեղեցական գլխոյ մը ներքեւ ձեր գլխաւորաւորութիւններն ազգային արտօնութեանց և կանոնաց համաձայն կամ զանոնք չհղձանդ ի՞նչ եկեղեցական վարչական կարգադրութիւններ որ բնեն՝ կրնան օրինաւորութեան և ազգայնութեան բնաւորութիւնը կամ յատկութիւնը ստանալ, և ի հարկէ ընդհանուր ընդունելութիւն գտնել ի շինութիւն և ի պայծառութիւն եկեղեցւոյ և ազգին:

Ղրան, և վերապ. Տեառք և հարք, ձեր ժողովին օ

ժուկ պահելու առաւելապէս Բարձրագոյն Ղրան ներկայացուցիչներէն քան ուրիշ որմէ և իցէ, անոնց մօտե նայու և անոնց հետ տեսնուելու առիթներէն իւր հետ ինչպէս, ասոնք ամենքը Բարձրագոյն Ղրան իրաւանց միտաւոր և ձեր պարտաւորութեանց հակառակ եղելով ինչպէս են, որոց թոյլատուութիւն պիտի չըլլայ յետ այսորիկ: Վստիգի մեր օգոստոսիառ տիրոջ առջայ առջև յայտնի եղած է որ՝ եթէ տէրութիւնները որոց տուել իրաւանց և զաշնադրութեանց յարգութիւնը անխօսիսեցի սկզբունք մըն է, եթէ կըսեմք տէրութիւնները ամենաւոր յօժարամտութիւն մի ցուցցած ըլլալին, ձեր Բարձրութեան նպատակն էր մեր դաշնագրութիւնները ջնջել, անոնց տեղ ուրիշ զաշնադրութիւններ հաստատուել, մէկ խօսքով անհետ ընել հրովարտական պարտաւորութիւնները որոց վերայ հիմնաւոր են զոյնութիւնը և տնտեսութիւնը Եղիպտոսի այժմեան կառավարութեան: Ներքին նկատմամբ ևս, անթիւ և ամենամանր ծախքերը, որոց պատճառ եղած են զրահաւոր նաւուց, հրացանից և ուրիշ զինուոց յանձնարարութիւնները, տէրութեան այս երկրին բնակիչները՝ իրենց կարողութեանն աւելի ծանր բեռի ներքեւ կըդնեն և զժգո՛հ կըդնեն զանոնք ընդգէմ վարչութեան:

Ինչպէս որ վերը զրուցուեցաւ և գոր հարկ կըհամարուի կրկնել, մեր օգոստոսիառ տէրը վեհապետ Սուլթանը՝ որ Եղիպտոսի բնակչաց բարեկեցութեան և երջանկութեան վերայ մեծ խնամք ունի, և կըփափարի որ այս գաւառը վայելէ իւր արտօնութիւնները իրենց օրինաւոր սահմանաց մէջ, երբէք չկրնար թոյլ և հաւանութիւն տալ որ այս գաւառը իւր կայսերութեան հետ միայնօղ կապելու տէրաւան: Եղիպտոսի երկիրը օճեցնեան կայսերութեան ամբողջութեան պաշտպանութեան սկզբանց ներքեւ գտնուելով, անկարելի է բացատրել զպատճառները որոյմէ չարժեալ յիշեալ երկրին կառավարութիւնը չորստար կըլլաւորէ հաստիարայ զանձը՝ զրահաւոր նաւու և անն տեսակ զէնքեր ծախու առնելով: Ըստորում ժողովուրդը ամենին չկրնար տանիլ այսօրինակ անչափ և ապարդիւն ծախուց բեռը՝ օգոստոսիառ կոչարը՝ որ Եղիպտոսի օրինաւոր վեհապետն և բնական պաշտպանն է իւր հպատակաց, չկրնար թոյլ տալ այս ծախուց շարունակութիւնը: Ծանուցեալ ճշմարտութիւն մի ըլլալով թէ տարապայման ծախքը քաղաքակրթութեան պատճառը չէ այլ անոր արդիւնքն է, ճշմարիտ յառաջադիմութիւնը կըկայանայ նորանոր բարեկարգութեանց հաստատութեան մէջ, որոյմէ յառաջ կուգայ այս քաղաքակրթութիւնը: Զեր Բարձրութեան լուսաւոր և արդարադատ միտքը քաջ ճանաչելով, աւելորդ կըհամարվիք հոգ տանիլ ապայումջանելու ձեզ ազիտուել հետեւութիւնները այնպիսի ընթացքի մը, որ գլխաւոր հիմունքը թող աղաղկ սկսի այն առարկաներէն որոնք քաղաքակրթութեան արդիւնքը պիտի ըլլան:

Այս անիւղը և օրինաւոր բացատրութեանց նպատակը ուրիշ բան չէ՝ բաց միայն ձեր Բարձրութեան

րինաւորութեանը նկատմամբ վերոյիշեալ դիմողութեանն զատ ուրիշ պարագայ մը ալ յատկապէս ուշադրութեան արժանի է որ, մինչև հնուց ի վեր մեր սպգային եկեղեցական ժողովներուն հալան մէկ պայմանն է վարդապետաց դասուն ազգային Սինոդոսաց մէջ որոշիչ ձայն ունենալը, չըլլալով ինչ նպատակաւ և ի՞նչ թեւադրութեամբ, ազգին աշխարհական և կանոնական կղերին մեծ մասին, մասաւանց հասակաւ, գիտութեանը բարեպաշտութեամբ, իրենց բողոքմանց այլապէս ծանր և արդիւնաւոր աշխատաւորութեամբ և ժողովրդին ու կղերին ըրած մեծամեծ երեւելի ծառայութիւններով նշանաւոր և սիրելի և յատկապէս Հոռոմայ Ս. Սեկղեւոյն վարդապետութեանցն ու իրաւանցը, ինչպէս նաև ազգին բնաւորութեանը, կարօտութիւններուն և արտօնութեանցը տեղեակ, եկեղեցւոյ և ազգին շահերուն և պայծառութեանը նախանձանդով համբաւեալ երեւելի եկեղեցական անձանց վերոյիշեալ ժողովին մէջ ձայն չարտելով, այն արտօնութիւնը շարժուած է միայն սակաւաց, յորոց ոմանց այլապէս նկատմամբ ունեցած որպիսութիւններուն և ընթացքին վրայ շատ կարեւոր դիմողութիւնները յիշեալ առայժմ զանց ընել խոհեմութիւն կըհամարին:

Հաճեցէք, դերաւ, և վերապատուելի Տեառք և Հարք, ընդունել խնարհ և անկեղծ յարգանաց հաւաստիքը զէպ ի Ձեզ համարման և վստահութեան զգացումներով ընցուած:

ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

ծանր ուշադրութիւնը հրաւիրել այնպիսի եղելութեանց վերայ, որոց շարունակութիւնը ինչպէս նաեւ հաստատուն մնալը այժմեան շահերն մէջ, չեն կրնար համաձայնել մէջ ձեւերիւն օգտուել կայսերական այս գաւառին ուրուն լարեկանութիւնը յանձնուած է ձեռք, և ոչ կրնան համաձայնել Նորին կայսերական Վերահսկողութեան ծանուցեալ լրաւանց հաստատուն պահուելուն հետ. զորս ամենէն առաջ հարկ է պահպանել ամեն վնասէ : Տարակոյս չունիմք թէ ձեր Բարձրութիւնը՝ ձեր խորին խոհականութեամբ, ծանրագիտ խորհելով վերջիւնեալ զխոհութեանց վերայ, պիտի հաճիք ետ կենալու այն ամեն գործերէն որոնք ձեր արածութեանց և ձեր պարտաւորութեանց սահմանները կանցնին, և երախտագէտ ըլլալով մեր օգտաւորութեան տիրող ձեռքը լաւ բարեբարութեանց, ձեր բոլոր ջանքը պիտի կեդրոնացնէք Նորին կայսերական Վերահսկողութեան և աւելորդ բնակչաց կենսքը և ստացուածքը սպասովելու :

Որչափ որ ձեր Բարձրութիւնը իրեն չորհուած արատնութեանց պայմանաց սահմաններուն մէջ կամեցիտի, նոյնչափ մեր վերահսկող տիրող ձեր վերայ ունեցած բարեբար խնամքը պիտի աւելնայ և պիտի կրկնապատկուի : Այս պայմանները երկարորէն նշանակուած են վերջիւնեալ հրաւորութեան մէջ. հետեւեալը աւելորդ կը լինար իր իրարեւել այս տեղ :

Որովհետեւ անկարելի պիտի ըլլայ կոյտեմական կառավարութեան այս հրաւորութեան մէջ եղած արտադրութեանց մէկէն անգամ հրաժարել, պիտի պարտաւոր լինէք թէպէտ ցաւօք սրտի, նոյն արտադրութեանց զիմէ ամեն անգամ որ հարկ պիտի ըլլայ պէտք եղած միջոցները 'ի գործ դնել իրենց սահմանաց մէջ վերահսկողութեան և սահման համար այն հակառակ գործողութիւնները որք կրնան տեղի ունենալ, և իրաւունքը ու աւանդութիւնները հաստատուն պահելու համար :

ԱՂԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ ազգային երեսփոխանաց ժողովը՝ թուրքաստանի բոլոր Հայոց Պատրիարքը ապօրինաւորապէս ընտրեց. այսինքն առանց մասնակցութեան դաւառական Հայոց, որոց ընտրութեան իրաւունքը չուէր ճանաչել և 'ի գործ դնել :

Այս ծանր խնդիրը՝ որ բողոքող ներքեւ կը դառնուի առայժմ մէկ կողմ ձգելով, կը փութամբ պատրիարքական ընտրութեան ինչպէս կատարուիլը ծանուցանել մեր ընթերցողաց :

Անցեալ ամսոյ 31-ին հինգշաբթի օրը Կ. Պօլսոյ ազգային երեսփոխաններէն 60 հոգի Գումբաբուի մայր եկեղեցին դումարուեցան : Այս ժողովոյն մէջ նախ պատրիարքական ընտրութեան համար Բարձրագոյն Դոնէն եկած հրամանագիրը, երկրորդ Պօլսոյ երեսփոխանական համապատասխան ժողովոյն պատրաստած ընտրելեաց ցանկը և երրորդ խառնաժողովոյն առաջարկած ընտրելեաց ցուցակը կարգադրուելէ ետեւ, ժողովը անմիջապէս քուէարկութեան դրոժովութիւնը սկսաւ. որուն արդիւնքը հետեւեալն է :

27 քուէ	Իդնատիոս	Արքեպիսկոպոս Վարդոյ,
11 "	Սիւրաբէ	" Սրիման,
9 "	Յարութիւն	" Վարդոյ,
8 "	Սիւրաբէ	" Դարպիզդին,
5 "	Սիմեօն	" Երեւակէֆ :

60 քուէ :

Առնց մէջ, ինչպէս կը տեսնուի, քուէից բաժար. ձախ առաւելութիւն վատըկող չգանուելով, երկու առաւելագոյն քուէ ստացուցաւ՝ այսինքն Իդնատիոս և Սրիման արքեպիսկոպոս պէրայ երկրորդ անգամ քուէարկութիւն եղաւ, և այս անգամ 40 քուէ Իդնատիոս արքեպիսկոպոսը ունեցաւ և 22 քուէ Սրիման Սիւրաբէ արքեպիսկոպոսը : Այս արդիւնքը ներկայ դառնուող դրոժունեայ և ազատաւոր ժողովրդեան վերայ, որոց թիւը 500-ի կը հասնէր, խիստ ձախարհ տպաւորութիւն ըրաւ. քանզի հաստատապէս կը յուսային որ Սրիման արքեպիսկոպոսը պիտի ընտրուի. և որովհետեւ երեսփոխանաց ժողովը 'ի դերեւ հանց իրենց յոյսը, սկսան գովազտութեան ազդակներով պոռալ կանչել : Այսու ամենայնիւ դերաւ, Իդնատիոս արքեպիսկոպոսը՝ զօրութեամբ սահմանադրական օրինաց, Պատրիարք հրատարակեցաւ թուրքաստանի բոլոր Հայոց, կամ ճշդիւ խօսելու համար միայն Կ. Պօլսոյ Հայոց. վասնզի օսմանեան բոլոր Հայ ժողովրդեան Պատրիարքը՝ հարկաւ առանց դաւառական Հայոց մասնակցութեան չկրնար օրինաւորապէս ընտրուիլ :

Արարարեան Արշալոյս՝ իրեն ջատագով և հետեւող օրինաւորութեան, կը շնորհակտէ Կ. Պօլսոյ նոր Պատրիարքին ընտրութիւնը և կարողութիւն ու յաւելումը իր կը բարեմաղթէ ամենապատիւ տէր Իդնատիոս սրբազանին : Իսկ ժողովրդեան գովազտութիւն և լրագրաց ազդակները եթէ շարունակուելու ըլլան ընդգէմ այս ընտրութեան, ազդին մէջ անիշխանութիւնը գծադրաբար պիտի հաստատուի. որուն հետեւութիւնները միշտ ազդեալ են :

Արքեպիսկոպոսը յօդուածինս՝ խառն ժողովոյն առաջապետ վսեմա. Կ. Օսմանէֆէնի Օգոստոսի 1-ին դրած հետեւեալ օրինաւոր ու խոհական համակը մեր ընթերցողաց հաղորդելով, որ Պօլսոյ Հայ լրագրաց մէջ հրատարակուեցաւ և ճշմարիտ ազգասիրաց միտքը բաւականապէս լուսաւորեց և հանգրաւեցող :

«Իրեկ իրկունէ 'ի վեր զանազան նամակներ ընդունեցայ այնպիսի անձանցմէ, որոնք՝ ինչպէս կը ընայ՝ Սրիման սրբազանը ազդին Պատրիարք տեսնելու կը փափաքէին. այն նամակներուն կը պատասխանեմ հրապարակաւ :

«Սրիման սրբազանը իրաւամբ սիրելի է ազդին և ես ալ փափաքող էի անոր Պատրիարք ըլլալուն : Այլ ամեն փափաք պէտք է լի օրինաւորութեան ձայնին առջեւ : Սահմանադրութիւն ուղղող ազդ մը պէտք է երեսփոխանութեան ոգիւնը յարգէ. եթէ երեսփոխանութեան որոշումը չյարգուի, երեսփոխանութիւնն անկարելի և աւելորդ կը ըլլայ : Պէտք է ցուցնենք ամենուն որ եթէ մէկ կողմէն կուզենք մենք ընտրել մեզ կառավարողները, զիտենք նաեւ յարգել մեր ընտրածներուն որոշումը : Սահմանադրութեան ապագայն բոլորովին ազդին այսօրուան բնական ընթացքին մէջ է :

«Իսկ երկուսն յոյսը, որով ընդհանուր ժողովին ներկայ դառնուող հանդիսականք իրենց գովազտութիւնը յայտնեցին Իդնատիոս սրբազանին ընտրութեան վրայ, ես կը յուսամ թէ Իդնատիոս սրբազանին համար խթան մը պիտի ըլլայ. խթան մը որ ամեն օր զինքը պիտի գրգէ անտարբեր չմնալու ազդին ցաւերուն, անոնց բարեմանը որպէս կարելի է շուտով մատուցանելու, ազդին բողոքները կատարելու, և ինչ յոյս որ ունենինք Սրիման սրբազանին վրայ՝ այն յոյսերն իր ձեռքով պատկերու : Իդնատիոս սրբազանը զոհ պիտի ընէ ազդը, որովհետեւ այս ժամանակիս մէջ առանց ազդը զոհ ընելու Պատրիարք նստիլ անկարելի է, և ազդը զոհ ընելու համար պէտք է որ ազդին անձնանուէր ըլլայ Պատրիարք մը :

«Իսկ եթէ ո՛ր և է Պատրիարք զոհ չկրնայ ընել ազդը, ազդը թողանելով ըլլայ : Սահմանադրական վարչութիւնը վերահաստատուելով՝ ամեն օր ազդին իր ձեռքն է իր պաշտօնէսները պաշտօնէն ձգել : Անձանց շատ կարեւորութիւն չտանք, այլապէս անի կը զուլթիւն մը ունենանք վարչութիւն, որ պաշտօնի վրայ դառնուող անձինք ընդհանուրին կամքին ծառայելու պարտաւոր ըլլան» : Գ. Ս. ՕՏԵԱՆ

Սահման Օգոստոսի 4 օրակերթին մէջ հետեւեալը կը լարեամբ :

Արքեպիսկոպոսը թէ երեկ մայրաքաղաքիս թաղական խորհրդականները Վալարթիա դումարուելով, հինգշաբթի աւուր պատրիարքական ընտրութեան վրայ վիճեր են : Գլխաւոր խնդիրն այս է եղեր թէ երեսփոխանական քուէարկութեան մէջ ապօրինաւորութիւն կամ թէ ոչ : Իրկար վիճաբանութեան ետեւ համոզուել են որ քուէարկութիւնն օրինաւոր է :

«Կանապէս համոզուել են թէ քանի որ ժողովրդեան կողմէն դերաւ. Իդնատիոս սրբազանին ընտրութեան գէմ կանխաւ բողոք ունեցած չէ, հիմա բողոքելու իրաւունք չկայ : Սիւնի թէ նորընտիր Պատրիարքին քանի մը խնդիրներ կրնան ներկայացուիլ, որք են :

Ա. Սահմանադրութեան արամադրութեանը համաձայն՝ երեսփոխանութեան պալատ, ժամանակին լրացած կամ մինչեւ հիմա նիստերուն ներկայ չըլտնուած անգամայն տեղ անյապաղ նոր երեսփոխաններ ընտրութիւն :

Բ. Վերականգնուել երեսփոխանութեան ձեռք բաղդական և կրօնական ժողովոյն ընտրութիւն և նոր Սահմանադրութեան ալ վերաբնութիւն :

Գ. Պահանջել նորընտիր պատրիարքին որ առանց այս ժողովոյն զօրմակցութեան բան մը չընէ :

Այս երեք խնդիրները պատրաստելէ և ստորագրելէ ետեւ, թաղական խորհրդականք պատրաստուելու վրայ մը կազմելով Բերա Էլէր՝ նորընտիր Ս. Պատրիարքին ներկայացրէն : Հին դառնութիւն հաւ խառն ժողովոյն ատենապետ վսեմա. Օսմանէֆէնի Կ. Պատրիարքը համաթաղական պատգամաւորութեան խնդիրները լսելով, ամենեւալ ընդունել և ճշդիւ ու անյապաղ զօրմակցելու խօսք տուել է : Ասոր վրայ համաթաղական պատգամաւորութիւնը զոհ ըլլալով մեկնել է :

Ուրախ սրտիւ կը ծանուցանեմք թէ Ս. Երուսաղէմայ գերա. Սահակ արքեպիսկոպոսը և իւր ընկերակից արքա. Տիմոթէոս վարդապետը, որոնք Հայկաստանի մէջ զբիւրեւ երեք տարեկ 'ի վեր արդիւնեալ կը մնային, մօտերս հասնել են յիշխալոս պաշտպանութեամբ և դրամական նպաստիւք Անդրեոյ կառավարութեան, որուն մարգարէական ծառայութիւն մի մատուցանելու նպատակաւ յանձնառու եղած էին այս վտանգաւոր ճանապարհորդութեանը՝ ըստ հրամանի ամենա. տէր Եսայի սրբազան Պատրիարքին :

Վալարթայէն Զուլիսի 4-16 ամսաթուով զրուած նամակները կը ծանուցանեն թէ նոյն մայրաքաղաքին ազգային եկեղեցական կառավարութիւնը քանի մը ամիսէ հետեւ գծադրաբար ցաւալի վիճակի մը մէջ կը գտնուի 'ի պատճառս ծանր տարաձայնութեանց որ ծագած են յիշեալ կառավարութեան անգամայն մէջ. իրաց այս ձախարհ կացութիւնը տեսնելով, յարգող եկեղեցական քանի մը անգամ 'ի ժողով հրաւիրելով զհասարակութիւնն՝ ուղեր է հրաժարել իւր պաշտօնէն, բայց անոր հրաժեշտը չէ ընդունուել :

— Սեր Հայազգի բարեկամներէն մէկը՝ Չինաստանի Հոնկոնգի քաղաքէն Զուլիսի 10-22 ամսաթուով հետեւեալ տեղեկութիւնները կուտայ մեզ իւր փրի աֆիոնին վրայօք :

«Խաղով ժամանակ է, յորմէ հետեւ թուրքիոյ աֆիոնն չէ եկեալ աստ. վասնորոյ զին նորա անհատաւոր է. բայց կարելի է թէ փեթուլն որ 133 պոնթ կը լինէ, 700 թալէրի վաճառեցի (այսինքն 1. Ս. 157. 10) : Եթէ շատ աֆիոն չժամանուի, յայնժամ կարելի է թէ 750 թալէրի ևս դնող դառնիցիք : Սիւնի թալէրն արժէ այժմ 6 շըլլին 6 պէնս, բայց երբեմն 1 կամ 2 պէնս աւելի և երբեմն պակաս արժէ :

ԳԼԴՏՆԻՔ ՓԼՐԻՔԻ

Էօմեն Սիւ գաղղիացի հոգաւոր հեղինակին այս պատուական վկայականութեան երրորդ ու չորրորդ հատորներն մօտերս 'ի յոյս ընծայուեցան Տեղեկան տպարանը քաղաքիս, բարգմանութեամբ Մամուրեան պարոն Մատթէոսին, որուն աշխարհաբար ընտիր գրիչը ծանօթ է ուսումնասիր հասարակութեան :

Ամբողջ գործը ուր հատորէ բաղկացեալ պիտի ըլլայ. որուն բաժանորդութեան գինը՝ 90 դուրուշ է կանխիկ վճարելի. իսկ Միգրապալի բաժանորդաց համար 80 դուրուշ : Խաբարեցիք հատորը գատ գատ 15 դուրուշի կը վաճառի :

ՎԻՅԹՈՐ ՀԻՄԵՅԻ ԹԵՌԻԱՆԵՐԸ
Թարգմանութիւն պարոն Գրիգորի Չիլիկիլիքեան :

Այս բարոյական գեղեցիկ վկայականութեան վրայ բողոք և եօթներորդ հատորներուն հայերէն աշխարհաբար թարգմանութիւնը արդէն հրատարակուեցաւ իւր մեր Տեղեկան տպարանը, և ուրեքորդ հատորն ալ մօտերս մամուլի ներքեւ պիտի գրուի : Ամբողջ գործը 10 հատորէ բաղկացեալ պիտի ըլլայ. իւրաքանչիւր հատորին գինը 48 դուրուշ է. իսկ բողոք հատորաց համար բաժանորդագրութիւնը 150 դուրուշ է :

ՄԿՐՈ—ՄԿԼԱՍ, ՃԻՐՄԱՆՈՒՆ ՍԵ
Եւ Եսան ու Գօլէն :

Վօլգիի այս իմաստասիրական եւ բարոյական խիստ հետաքրքիր երեք պատմութիւնները, որոնք ընդ ամենը 66 երեսէ բաղկացեալ են, աշխարհաբար հայերէնի թարգմանուելով 'ի պարոն Մ. Մամուրեան ուսումնական պատուէիկէն, 'ի յոյս ընծայուեցաւ 'ի Չիլիկիլի 'ի Տեղեկան տպարանին :

Այս վտարիկ գրքից՝ զոր ուսումնասիրաց ուշադիր բերեցանութեանը արժանի կը նամարիմք : Կը վաճառի Գինը 90 դուրուշ :

